Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 26-ի գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի NN 87-128 որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից որոշումների մեջ առկա են հետևյալ թերությունները.

1. N 97-Ա և 98-Ա որոշումների նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին կատարված հղումը ճիշտ չէ։
2. N 100-Ա որոշման վերնագրից անհրաժեշտ է հանել «թույլտվություն տալու», իսկ 1-ին կետից՝ «թույլատրել» բառերը։
3. N 107-Ա որոշման նախաբանի 1-ին և 3-րդ պարբերություններում դիմումատուի տվյալները տարբեր են նշված։
4. N 115-Ա որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերում անուն, ազգանուն դաշտը սխալ է գրառված։
5. N 116-Ա որոշման «հոդվածների» բառը անհրաժեշտ է փոխարինել «կետերի» բառով։ Որոշման հավելվածի 10-րդ կետում կառուցապատողների անունները գրառված չեն։
6. N 117-Ա որոշման հավելվածի դրույթները համարակալված չեն։
7. Որոշումների մեջ նշվել են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրել են։ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները։ Համայնքի ավագանու որոշումը ստորագրում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ա.Սուվարյան
19.08.2022թ.

1.ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի թիվ 115-Ա որոշման մեջ հղում է կատարվել ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասին, որը ուժը կորցրած է ճանաչվել /հիմք՝ 27.02.12թ. ՀՕ-27-Ն/։

2.ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի թիվ 125-Ա որոշման մեջ հղում է կատարվել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասին, համաձայն որի համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագիծը, իրավունք է ստանում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության սահմանված կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով։ Հաստատված գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխվում են ՀՀ կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, համայնքի ղեկավարի որոշմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետ/։

3.ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի թիվ 126-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում ավագանու որոշման բովանդակությանը։ Համայնքի ավագանու որոշման մեջ հղում է կատարվել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասին, համաձայն որի համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագիծը, իրավունք է ստանում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության սահմանված կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով։ Հաստատված գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխվում են ՀՀ կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, համայնքի ղեկավարի որոշմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետ/:

4.ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի թիվ թիվ 104-Ա, 106-Ա, 107-Ա, 108-Ա, 109-Ա, 110-Ա, 111-Ա, 112-Ա, 113-Ա, 116-Ա, 118-Ա, 120-Ա, 121-Ա, 122-Ա, 123-Ա և 124-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Զ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.07.2022թ.

Կատարող՝ Է. Պետրոսյան